

Թեսա Ա. Հոֆման
(Գերմանիա)

ԻՆՉՊԵՍ ՀԻՇԵԼ ԵՎ ՈԳԵԿՈՉԵԼ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻՆ՝*

Բանալի բառեր – ներգաղթյալ հանրություններ, Օսմանյան ցեղասպանություն, հայեր, սիրիացիներ, ներգաղթյալներ, հուշարձաններ:

Ցեղասպանության բազմաթիվ վերապրածներն ու նրանց հետնորդները կարողանում են միայն ապաստան երկրում ի մի բերել կորուստները և ոգեկոչել իրենց զոհերին: Այդպես է, օրինակ, Գերմանիայում ապրող բազում հայերի դեպքում: Ուրեմն ինչը և ինչու՞ պետք է հիշվի և ամենից առաջ՝ ինչպե՞ս:

Առնվազն հինգ տասնամյակ պահանջվեց, մինչև դաշնային Գերմանիայի հասարակայնության և քաղաքական վճիռներ կայացնողների մեջ հաստատվեց այն ըմբռնումը, որ դաշնային հանրապետությունը ներգաղթի երկիր է: Նաև այն գիտակցությունն արմատավորվեց, որ ներգաղթյալների մեծ մասը հալածվել է պատերազմական իրողություններից, քաղաքական, կրոնական կամ էթնիկական հետապնդումներից: Հալածվածներն ու փախուստի դիմածներն իրենց հետ բերում են բռնության հոգեվնեղիչ փորձառություններ, որոնք առանձնապես ծանր դեպքերում, որպիսին ցեղասպանությունն է, փոխանցվում են սերնդեսերունդ: Ցեղասպանության և մարդկության դեմ այլ հանցագործությունների բազմաթիվ վերապրածներ միայն տարագրության մեջ, այն է՝ ապաստան երկրում են հնարավորություն ստանում ի մի բերել իրենց կորուստները և ոգեկոչել իրենց զոհերին:

Այդպիսի օրինակ են Թուրքիայից սերող հայերը, արամեացիները կամ ասորի ուղղափառ քրիստոնյաները և հույները: Որպես, այսպես կոչված, թուրք արտագնա աշխատողներ՝ նրանք դաշնային հանրապետություն մուտք գործեցին 1960-ական թվականներից: Նրանք ցնցված էին 1955 թ. սեպտեմբերի 6-7-ի «Ստամբուլյան Բյուրեղյա գիշերից»՝ կազմակերպված զանգվածային բռնություններ Ստամբուլում և Ջյուրտիայում հունական խանութների, դպրոցների, եկեղեցիների և գերեզմանատների դեմ՝ ուղեկցվելով հայկական ու հրեական հաստատությունների վրա կատարվող հարձակումներով:

Գերմանիայում բնակվող ավելի քան 100.000 արամեացիների/ասորի-

Ժ (ՃԶ) փայրի, թիվ 3 (63), հայխա-սեպտեմբեր, 2018
ՎԿՎ համահայկական հանդես

*Ընդունվել է տպագրության 20. 07. 2018:

ների և շուրջ 40.000 հայերի մեծ մասը ուղղակիորեն կամ իրենց ծնողների միջոցով սերում են Թուրքիայից: Այն, թե արդյոք ներգաղթողները կարող են իրենց գոհերին հիշել ապաստան երկրի որևէ հասարակական վայրում, վճռում է այդ բռնություններին անմասն մնացած հասարակության մեծամասնությունը: Նրանք իշխանություններն ու վճիռ կայացնողներն են, որոնք պետք է իրենց համաձայնությունը հայտնեն հուշատախտակների, հուշարձանների կամ հուշավայրերի հիմնման, ինչպես նաև դրանց տեղի և նվիրագործման արձանագրությունների բովանդակության ու ֆինանսավորման հարցերի վերաբերյալ:

Ներգաղթյալ հանրությունները, որոնք Գերմանիայում (կամ այլ պետություններում) հիշատակման իրենց բաղձանքը կամենում են իրականացնել հասարակական կամ կիսահասարակական վայրերում, պարտավոր են դա համոզիչ կերպով հիմնավորել: Կարևոր փաստարկ են հանդիսանում այն պատմական աղբյուրները կամ հիշողությունները, որոնք նաև հասարակության մեծամասնությունն է կիսում և պատրաստ է ընդունել: Այդպիսի աղբյուրներ անմիջականորեն եղել են 1904–1908 թթ. գերմանական հարավարևմտյան գաղութում (ներկայումս՝ Նամիբիա) հերերոների, նամաների և սաների ցեղասպանության, ինչպես նաև Օսմանյան պետությունում շուրջ երեք միլիոն քրիստոնյաների՝ հայերի, ասորի և հույն քրիստոնյաների ցեղասպանության դեպքում (1912–1922 թթ.): «Գերմանական հարավ–արևմուտքում» գերմանական պաշտպանական զորամասի հրամանատար, պրուսական գեներալ Լոթար ֆոն Տրոթհան պատասխանատու էր կայզերի համաձայնությամբ մինչև 80.000 տեղաբնիկ աֆրիկացիների ոչնչացման համար: Չնայած դրան՝ Նամիբիայում առայսօր կան ցեղասպան ֆոն Տրոթհայի անունով անվանակոչված փողոցներ: Մյունխեն–Տրուդերինգում ֆոն Տրոթհայի անվան փողոցը միայն 2016–ին վերանվանվեց Հերերոների փողոց:

Օսմանյան ցեղասպանության¹ պարագայում գերմանական կառավարության քաղաքական գործիչները, դիվանագետներն, ինչպես նաև զինվորականության ներկայացուցիչները, տեղյակ լինելով այն ժամանակվա Գերմանիայի դաշնակցի ոճրագործություններին, հանդուրժում և հաճախ նաև հավանություն էին ցույց տալիս դրանց: Օսմանյան պետությունում կայզերական Գերմանիայի ռազմական առաքելության մի քանի հրամանատարներ ռազմաճակատի շրջաններում անձամբ պատասխանատվություն էին կրում հայ ազգաբնակչության աքսորի համար:

Չնայած տեղական իշխանությունները, այսինքն՝ քաղաքագլուխները, հուշատախտակների տեղադրման հանձնաժողովները կամ համայնքային խորհուրդները և քաղաքային խորհուրդների անդամներն ինքնուրույն կերպով են որոշումներ կայացնում հուշարձանների կամ հուշատախտակների հիմնման մասին, այնուհանդերձ ցեղասպանությունների վերաբերյալ օրենսդրի ընդունած բանաձևերը, եթե դրանք ՄԱԿ–ի Ցեղասպանության կոնվենցիայի ընդունումից (1948 թ.) առաջ են տեղի ունեցել և այդ պատճառով որպես կանոն իրավաբանական և դատական քննության չեն ենթարկվել, նրանց շատ են օգնում: Նամիբիայի առնչությամբ Բունդեսթագն առայսօր համապատասխան բանաձև չի ընդունել, չնայած 2012–ին ՄԴԿ–ի (Գերմանիայի

¹ Այս հասկացության միջոցով են Գերմանիայում բնորոշվում Օսմանյան կայսրության իշխանությունների իրականացրած բոլոր ցեղասպանությունները: Խմբ.:

սոցիալ-դեմոկրատական կուսակցություն) խմբակցության այն ժամանակվա ղեկավար Ֆրանկ-Վալտեր Շթայնմայերը մի համապատասխան առաջարկ էր ներկայացրել Բունդեսթագին:

Ինչ վերաբերում է Օսմանյան ցեղասպանությանը, 1986-ին ԵՊ-ում (Եվրոպական պառլամենտ) ՔԴՄ-ի (Գերմանիայի Քրիստոնեա-դեմոկրատական միություն) և ՄԴԿ-ի պատգամավորները նպաստեցին այն բանին, որ պառլամենտի քաղաքական հանձնաժողովը վճռի ընթացք չտալ ցեղասպանության վերաբերյալ նիդերլանդական պատգամավոր Ժակ Վանդենոյլերբուկեի տեղեկագրին: 1987-ին, այնուհանդերձ, այդ տեղեկագիրը հանձնաժողովում ձայների չնչին մեծամասնությամբ ընդունվեց: Սոցիալ-դեմոկրատական պատգամավոր Կլաուս Հենշի դիմումով, այնուհանդերձ, ցեղասպանություն եզրույթը ջրվեց՝ փոխարինվելով «հայ ժողովրդի հանդեպ իրագործված անարդարությամբ»: Հենշն այն ժամանակ «Վտանգված ժողովուրդների ընկերակցության» (ՎԺԸ) նամակագրական և հեռախոսային հարցումներին ի պատասխան բազմիցս դեմ էր արտահայտվել այն բանին, որ Եվրոպական պառլամենտը զբաղվի Օսմանյան ցեղասպանությամբ: Նա դա պատճառաբանում էր նրանով, որ ԵՊ-ն «պատմաբանների համաժողով» չէ: Բացի այդ՝ նա այն տեսակետն էր հայտնում, թե հայերը ցանկացել են Թուրքիան մասնատել՝ նշելով, թե ինքը՝ որպես սոցիալիստ, դեմ է ազգային պետության վերացմանը և ըստ այդմ նաև նոր պետությունների ձևավորմանը:

2000 թ. ապրիլին մի շարք հասարակական-քաղաքացիական կազմակերպություններ, այդ թվում նաև ՎԺԸ-ի՝ Հայաստանին վերաբերող հարցերը համակարգող խումբը, գերմանական Բունդեսթագի՝ հայտագրերի հանձնաժողովին ներկայացրին շուրջ 16.000 մարդկանց կողմից ստորագրված՝ «Ժամանակն է. դատապարտել ցեղասպանությունը» հայտագիրը: Գերմանական օրենսդիրը միայն 16 տարի հետո՝ 2016 թ. հունիսի 2-ին մինչ այդ իբրև «վտարում և կոտորած» ձևակերպված ոճրագործությունները որակեց որպես ցեղասպանություն:

Դրանով այնուհետև Գերմանիայում կրթության և գիտության, ինչպես նաև հիշողության մշակույթի ոլորտում շատ քիչ բան է որոշակիորեն բարելավվել: Թուրքիայից սերող ներգաղթյալ հանրությունները նույնպես չէին ուզում չափազանց երկար սպասել: Նախ և առաջ հայկական համայնքները 1987-ից ի վեր 11 գերմանական քաղաքներում (Շտուտգարթ, Բրեմեն, Բրաունշվայգ, Հոխստադտ, Նոյվիդ, Հալլե, Լեեր-Օստֆրիզլանդ, Յենա, Բեռլին, Քեհլ, Քյոլն) խաչքարեր են տեղադրել ի հիշատակ իրենց նախնիների հանդեպ իրականացված ցեղասպանության զոհերի՝ մեծ մասամբ կիսահասարակական վայրերում: Բացառություն են կազմում Լեերը (2015), Յենան (2016) և Բրեմենը (2005): Բրեմենում հոգուտ հուշաքարի տեղադրման նախաձեռնողականություն դրսևորեց այն ժամանակվա քաղաքագլուխ Հեննինգ Շերֆը (ՄԴԿ): Խաչքարերի մեծ մասը տեղադրվել է աշխարհիկ և եկեղեցական գերեզմանատներում: Հասարակական վայրերում տեղակայված խաչքարերի դեպքում խոսքը վերաբերում է զբոսայգիների ծայրամասային հատվածներին և կանաչապատ տարածքներին: Տեղակայման վայրերն արտացոլում են հիշատակման գերմանական քաղաքականության մեջ առկա հետադասման դիրքորոշումը:

Բայց Քյոլնի «Հիշել ցեղասպանությունը» միջազգային նախաձեռնությունը չէր ուզում համակերպվել ծայրամասային տարածքներ մղելու՝ սման քաղաքականության հետ: Այն 2018 թ. ապրիլին Հոհենցոլլերների կամրջի մոտ տեղակայեց մոտ մեկուկես մետր բարձրությամբ պողպատե բուրգ, որի գագաթին կա մի ձեղքված նուռ: Կողապատերի վրա արձանագրված է քյոլնաբնակ գրող Դոդան Աքանլիի կողմից հեղինակված մի բանաստեղծություն հետևյալ վերնագրով. «Այդ ցավը վերաբերում է մեզ բոլորիս»: Քյոլնի կառավարչությունը կարգադրեց անհապաղ հանել հուշարձանը: Նա դա պատճառաբանում էր ինչպես երթևեկության անվտանգությամբ, այնպես էլ երկու մետր բարձրություն ունեցող խաչքարով, որը նախորդ տարի տեղադրվել էր Քյոլն-Բրյուքի գերեզմանատան հայկական հատվածում: Վերջինս կրում է նվիրաբերման հետևյալ արձանագրությունը. «Ի հիշատակ 1915–1916 թվականների Հայոց ցեղասպանության զոհերի»: Թուրքական համայնքի, ինչպես նաև «Ազկիթների գերմանա-թուրքական միության» (DITIB) ճնշման ներքո այն ժամանակ քաղաքային վարչությունը Քյոլնի հայկական համայնքին արգելեց տեքստում նշել 1,5 միլիոն զոհերի թվաքանակը, ինչպես և Օսմանյան պետությանն անվանել ցեղասպանության պատասխանատու:

Գերմանական օրենսդրի կողմից Օսմանյան ցեղասպանության պաշտոնական ճանաչման համար տասնամյակներ շարունակ ձգվող պայքարը և ճանաչմամբ հնարավոր դարձող հաջողությունների դեմ թուրքական ազգայնական միությունների ու ընկերությունների ուժգին դիմակայությունը նպաստեցին նրան, որ հայերի համար հիմնականում առաջնապլանում է մնում խաչքարերի հիշատակող գործառույթը: Մյուս կողմից՝ հուշաքարը պետք է տեղակայվեր ըստ հնարավորինս աչքի ընկնող վայրում, առաջին հերթին՝ ինչպես ձևակերպել է «Գերմանահայոց կենտրոնական խորհրդի» նախագահներից մեկը՝ Բեռլինի «ռայխսթագի գմբեթի ստվերի տակ»: Որպես փոխգիշում՝ 2016-ին մի խաչքար տեղադրվեց Սբ. Հեղվիգի կաթոլիկ տաճարի տարածքում՝ Բեռլինի կենտրոնում: Այն հիշեցնում է 1919-ին այդ եկեղեցում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին կատարված ժամերգությունը:

Միայն հայկական բնակավայրերում տարածված ավանդական ձևով հայկական խաչքարերն ընդգծում են իրենց յուրահատուկ բացառիկությունը: Նվիրաբերման արձանագրությունները նույնպես վերաբերում են միայն հայ զոհերին՝ բացառությամբ Ենայի խաչքարի: Վերջինիս արձանագրությունում ներառված հավելումը պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ խաչքարը հիմնողը՝ ձեռնարկատեր Պողոս Գուլօղլուն, սերում է մի անդրազգային ընտանիքից, որն, իբրև այդպիսին, բնութագրական էր Օսմանյան պետության համար: Նրա հույն պապը, որը Հալեպում Բաղդադի երկաթուղու վրա էր աշխատում, ամուսնացել էր մի հայ աքսորյալի հետ: Ենայի խաչքարի հետևյալ արձանագրությունը հիշեցնում է նաև ոչ հայազգի զոհերի մասին. «Ի հիշատակ Հայոց ցեղասպանության 1,5 միլիոն զոհերի և ի հիշատակ 100 տարի առաջ սպանված արամեացիների, ասորիների ու փոքրասիական հույների: Ենա քաղաքը գիտակցում է Գերմանիայի համապատասխանատվությունը: Այս խաչքարը հաշտեցման խորհրդանիշ է»:

Բեռլինում արդեն 2002-ին ստեղծվել էր «Մեկ ձայնով խոսել ցեղասպանության դեմ» միջեկեղեցական նախաձեռնությունը: Նրա մեջ հայկական, արամեական-ասորական և հունական միություններն ու ընկերություններն առաջին անգամ համատեղ աշխատում են իրենց նախնիների հանդեպ իրագործված ոճրագործությունների՝ որպես ցեղասպանության, խորհրդարանական ու հասարակական դատապարտման համար: 2007-ին նախաձեռնությունը սկսեց մի նպատակահարմար վայր փնտրել՝ Օսմանյան ցեղասպանության զոհերի հիշատակին հուշաքար կանգնեցնելու համար: Այն դրա համար ընտրեց Շարլոտենբուրգի շրջանը, որտեղ օսմանյան, թուրքական, հայկական և գերմանական անցյալի ու ներկայի առանձնակի մեծ քանակությամբ աղերսներ կան: Չնայած այդ շրջանի այն ժամանակվա քաղաքագլուխը, ինչպես և հուշատախտակների շրջանային հանձնաժողովը սկզբունքորեն համաձայնել էին հուշաքարի տեղադրմանը, սակայն նրանք առաջարկված հասարակական վայրերից ոչ մեկի հատկացման համաձայնություն չտվեցին: Չափազանց մեծ էին «մուսուլմանական բնակչության» ըմբռնման բացակայության կամ հուշաքարի հնարավոր վտանգման առնչությամբ մտահոգությունները: Բեռլինյան նախաձեռնողները կանգնած էին մի դիլեմայի առաջ. կամ նրանք անորոշ ժամանակով պետք է սպասեին հիշողության քաղաքականության տեսանկյունից ավելի նպաստավոր իրադրության, կամ պետք է ընդունեին հուշատախտակների հանձնաժողովի առաջարկը՝ հուշարձանների և բնության պահպանության տարածք համարվող «Լուիզայի թիվ III» հայտնի եկեղեցական գերեզմանատանը ի հիշատակ Օսմանյան պետությունում ցեղասպանության զոհերի մի միջեկեղեցական հուշարձան հիմնելու վերաբերյալ:

Գերեզմանատան վարչությունն այդ նպատակով երկարատև օգտագործման համար տրամադրեց նախկինում թաղման համար նախատեսված երեք տեղեր, ինչպես և դրանք միացնող մի պարսպահատված: Այդպիսով հնարավոր եղավ մի հուշարձան կանգնեցնել, որը նախագծեց բեռլինցի ճարտարապետ Մարտին Հոֆմանը՝ Օսմանյան պետությունում ցեղասպանության զոհերի միջեկեղեցական հուշարձանի կառուցման աջակցության ընկերակցության հետ սերտ համագործակցությամբ: Հայ առաքելական, հույն ուղղափառ և ասորի ուղղափառ հոգևորականների կողմից օրհնվելուց հետո սկսվեց 1970-ական թվականներին լքված այդ թաղումատեղերի վերականգնումը՝ ըստ հուշարձանապահպանության կանոնների: Դրան հաջորդեց նրանց փոխակերպումը «հիշողության հարթակների»: Դրանք իրենց թևերի վրա կրում են «բնաջնջման վեց պատկերներ»՝ օսմանյան ցեղասպանության համատեքստում լայնորեն հայտնի լուսանկարներ, որոնք մակագրվել են «ազատություն», «անվտանգություն», «կյանք», «հայրենիք», «հավատ» և «մշակույթ» հասկացություններով: Ցեղասպանության ժամանակ ոչնչացվում է այդ արժեքներից յուրաքանչյուրը:

Կառուցվածքային մի չորրորդ տարրը ազնիվ պողպատից պատրաստված նվիրաբերման վահանակն է՝ զոհերի խմբերի թվարկումով և հետևյալ կոչով. «Հիշեք Օսմանյան ցեղասպանության զոհերին»: Նախաձեռնողները սկզբունքորեն հրաժարվել են մեղքի էջնիկացումից, գործրինակ՝ «Թուրքական ցեղասպանություն» արտահայտությունից: Նվիրաբերման վահա-

նակի միջով անցնում է մի հորիզոնական ձեղքվածք: Այն խորհրդանշում է վերքը, որը ոճրագործությունները որպես ցեղասպանություն ճանաչելու՝ թուրքական պետության և թուրքական հասարակության մեծամասնության հրաժարումով շարունակում է խորանալ: Անկարայում Ազգային Մեծ Ժողովի կողմից «ճանաչումից հետո» միայն ձեղքվածքը կփակվի: «Հիշողության հարթակների» առջև կա մի դաշտ 68 քառակուսի կրաքարե սալիկներով: Դրանք հիշեցնում են զոհերի առավել մեծ բնակավայրերը և, այնտեղ բնակված խմբերի, քաղաքների անունները՝ լատիներեն, հայերեն, հունարեն կամ արմեներեն տառերով: Դրանց միջև գտնվում են ավելի փոքր քարեր, որոնց վրա նվիրատուները կարող են փորագրել տալ ցեղասպանության մեծանուն զոհերի կամ իրենց սպանված նախնիների անունները: Բեռլինի միջեկեղեցական հուշակառույցը բազմագործառնության նախագծում ունի: Այն ծառայում է ոչ միայն որպես հիշեցման, այլ իբրև անհատական ու կոլեկտիվ սգո և ուսուցման վայր: 2015-ից ի վեր այստեղ ամեն տարի տեղի են ունենում հիշատակի միջոցառումներ՝ ապրիլի 24-ին (1915 թ., հայ զոհերի հիշատակի օր), մայիսի 19-ին (1919 թ., Պոնտոսի հույների հիշատակի օր), հունիսի 15-ին (1915 թ., արամեացի զոհեր), ինչպես նաև սեպտեմբերի 14-ին (1922 թ., Փոքր Ասիայի հույներ):

Երեք տեղեկատու վահանակների, ինչպես և կռած պողպատից պատրաստված չորս նստարանների հետ միասին ճարտարապետական նախագծման, ձևավորման և կառուցապատման ծախսերը կազմել են նվազագույնը 210.000 եվրո: Այդ գումարի մեկ երրորդը հատուցվեց մասնավոր նվիրատվությունների միջոցով, իսկ մնացյալ ծախսերը՝ քաղաքային, եկեղեցական և կիսապետական հաստատությունների տրամադրած ֆինանսավորմամբ: Գերմանիայում թուրքական դիվանագիտությունը արծվի աչքերով է հետևում հուշաքարերի տեղադրմանն ուղղված ամեն մի պետական ֆինանսավորման և փորձում է հակազդել դրանց: Դա ապացուցեց 2017 թ. վերջին Մայնի Ֆրանկֆուրտի թուրքական հյուպատոսի պաշտոնական բողոքը Գիսենին մերձակա Պոլիայնում նախատեսված՝ «Սեֆոյի» (այդպես են արամեացի-ասորիներն անվանում 1915 թ. իրենց ժողովրդի հանդեպ իրականացված ցեղասպանությունը) հուշարձանի դեմ: Բեռլինում թուրքական գլխավոր հյուպատոսը նույնպես ոչ վաղուց մի մասնավոր զրույցում պարզաբանել է, որ Թուրքիային չի խանգարի, եթե հայերը Գերմանիայում իրենց սեփական միջոցներով հուշաքարեր կանգնեցնեն, և այն էլ՝ կիսահասարակական վայրերում, ինչպես, օրինակ՝ Բեռլինի Հեդվիգի տաճարում գտնվող խաչքարն է: Սակայն Թուրքիան, ինչպես հայտարարում էր նա, կմիջամտի, եթե հասարակական վայրում մի հուշարձանի համար պետական կամ քաղաքային միջոցներ տրամադրվեն:

Գերմաներենից թարգմանեց Աշոտ Ն. Հայրունին

Թեսսա Ա. Հոֆման – պատվավոր պրոֆեսոր, փիլիսոփայության դոկտոր. բանասեր և սոցիոլոգ: Մինչև 2015 թ. ապրիլ ամիսն աշխատում էր Բեռլինի Ազատ համալսարանի՝ Արևելյան Եվրոպայի ինստիտուտում: Հրատարակել է բազմաթիվ աշխատություններ

Հայաստանի, հայկական Սփյուռքի պատմության, մշակույթի և ներկա դրության, Հայոց ցեղասպանության և Թուրքիայում ու Հարավային Կովկասում փոքրամասնությունների վիճակի վերաբերյալ: 1979 թվականից ի վեր «Վտանգված ժողովուրդների ընկերակցությունում» գործում է որպես Հայաստանին վերաբերող խնդիրների համակարգող, իսկ 2009 թվականից ՎԺԸ-ի պատվավոր անդամ է:



Նկար 1. – Բեռլինի միջնկեղեցական հուշակառույցն ունի բազմագործառնությանն նախագծում: Այն հիշեցնում է Օսմանյան ցեղասպանության գրիերի մասին, ոգեկոչում և ծառայում է՝ որպես սգո և ուսման վայր:



Նկար 2. – Ամեն տարի «Հիշողության հարթակների» առջև տեղի են ունենում ոգեկոչման միջոցառումներ ի հիշատակ մեռածների:



Նկար 3. – 68 քառակուսի կրաքարե սալիկները լատիներեն, հայերեն, հունարեն կամ արամեերեն տառերով հիշեցնում են զոհերի առավել մեծ բնակավայրերը և, ըստ այնտեղ բնակված խմբերի, քաղաքների անունները: Դրանց միջև գտնվող ավելի փոքր քարերի վրա նվիրատուները կարող են փորագրել տալ իրենց սպանված նախնիների անունները:



Նկար 4. – Նվիրաբերման վահանակը մատնանշում է ցեղասպանության զոհերի խմբերին: Մի հորիզոնական ձեղքվածք վահանակը բաժանում է երկու մասի: Այն խորհրդանշում է վերքը, որը զոհերի հետնորդների սրտում առայսօր բաց է մնում, քանի որ թուրքական պետությունը և թուրքական հասարակության մեծամասնությունը հրաժարվում են ոճրագործությունը ճանաչել որպես ցեղասպանություն:

Summary

HOW TO REMEMBER AND SUMMON THE VICTIMS OF GENOCIDE?

Tessa A. Hofman

Key words – immigrant communities, Ottoman genocide, Armenians, Syriacs, immigrants, monuments.

This essay explains the specifics of German history and memory policies with regard to immigrant communities in Germany. Although already in the 1960s post-war Germany has become a country of massive foreign immigration, it is only currently that the country officially admits its essence as a popular destination for immigrants of foreign origin, of which Turkey born residents and their descendants are still the largest immigrant community, including the descendants of those who survived the Ottoman genocide against indigenous Christians during the last decade of Ottoman rule (1912–1922): Armenians, Syriacs (self-identifying themselves as Armenians or Assyrians) and Greek-Orthodox Christians (Eastern Thrace, Pontos, Asia Minor) with a victim total of more than three million.

As a rule, it is the dominant majority of a country that determines which of the historic experiences of immigrants are remembered, and how these are remembered. In Germany the authorities of municipal districts decide where and how commemorative plaques, monuments and memorials of genocide remembrance are erected. There is a clear hierarchy in the commemoration of those who were victimized under Germany's responsibility, and those victimized by third sides, such as the Unionist or Kemalist regimes. The average German tendency in the case of the Ottoman genocide is to allow only peripheral locations or locations on semi-public grounds (cemeteries, church-grounds). So far, Armenian cross-stones have been erected in 11 German cities and towns beginning from city cemetery in Stuttgart (1987). As a rule, Armenian, Syriac and Pontos Greek Diasporic communities dedicate their monuments only to the commemoration of their own community. A prominent exception of integrated or inclusive commemoration is **the Ecumenical Memorial for Genocide Victims in the Ottoman Empire**, which has been erected in Berlin in 2012.

Резюме

КАК ПОМНИТЬ И ПОЧТИТЬ ЖЕРТВ ГЕНОЦИДА?

Тесса А. Хофман

Ключевые слова – иммигрантские общины, Османский геноцид, армяне, сирийцы, иммигранты, памятники.

В этом эссе раскрывается специфика немецкой политики истории и памяти по отношению к иммигрантским общинам в Германии. Хотя после-

военная Германия уже в 1960-х годах стала страной массовой иммиграции, только в настоящее время она официально признает себя как популярная для иммигрантов страна-убежище. Среди иммигрантских общин Германии беженцы из Турции и их потомки по-прежнему остаются крупнейшим иммигрантским сообществом, включая потомков тех, кто пережил Османский геноцид коренных христиан в 1912–1922 гг. – армян, сирийцев (осознающих себя как арамейцев или ассирийцев) и греко-православных христиан (Восточная Фракия, Понто́с, Малая Азия), причем общее число жертв этих событий составляет более трех миллионов.

Как правило, преобладающее большинство населения страны определяет, какое из исторических переживаний и как запомнят иммигранты. В Германии власти муниципальных районов решают, где и как возводятся памятные мемориальные доски, памятники и мемориалы в память о геноциде. Существует четкая иерархия между памятью о пострадавших, за которых несет ответственность Германия, и теми, кто пострадал от третьих сторон, как, например, от младотурецкого и кемалистского режима. Средняя немецкая тенденция в отношении к напоминаниям об Османском геноциде сводится к тому, чтобы давать разрешение только на периферийные местоположения или полуофициальные места (светские и церковные кладбища). До сих пор армянские хачкары были установлены в 11-ти городах Германии, начиная с городского кладбища в Штутгарте (в 1987 г.). Как правило, общины армян, арамейцев/ассирийцев и греков из Понто́са посещают только памятники своих жертв. Важным исключением интегрированной или всеобъемлющей памяти является **Вселенский мемориал жертвам геноцида в Османской империи**, который был установлен в Берлине в 2012 году.